Արձանագրություն N 3
Շշալցված խմելու ջրի ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/38» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի

ք. Երևան

04.05.2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մաթևոսյան /գնահատող/, Մ. Սարգսյան /գնահատող/
Ա. Մուրադյան /բացող/, Մ. Մալխասյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյանին

1. Անհամապատասխանության շտկման մասին

(Ս. Ներսիսյան)

Ընդունել ի գիտություն, որ «Ֆրեյա Էնդ Սոն» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտերում առկա անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ս. Ներսիսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել.

-1-ին չափաբաժնի մասով «Մեհրաբ Մեհրաբյան» ԱՁ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

-2-րդ չափաբաժնի մասով «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ս. Ներսիսյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:
Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ս. Ներսիսյան

Անդամներ՝ ---------- Ե. Մաթևոսյան

---------- Մ. Սարգսյան

---------- Ա. Մուրադյան

---------- Մ. Մալխասյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյանին